# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Իջևանի համայնքի ավագանու 2011թ. հուլիս 25-ին կայացած նիստի

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Վ.Ներսիսյանը
քարտուղար՝ Բ.Թանանյան

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու անդամներ՝ Նարինե Գրիգորյանը, Ազատ Նազարյանը, Կարեն Ներսիսյանը, Հրաչյա Ներսիսյանը, Սամվել Չիբուխչյանը, Գարիկ Սուքոյանը, Էմիլ Վարդապետյանը, Նարեկ Օհանյանը:

Նիստին հրավիրված և մասնակցում էին լրատվական միջոցների ներկայացուցիչներ, քաղաքապետարանի աշխատակիցներ:

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու օրակարգը հաստատելու մասին
2. Հաղորդում 2011թ. բյուջեի 1-ին կիսամյակի կատարման մասին
3. Բարերար Անդրանիկ Ղազարյանին Իջևան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին
4. «Իջևանի դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի գործունեության համար մշակույթի տունը տրամադրելու մասին
5. Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող Ուսանողական փողոցի թիվ 3 հասարակական նշանակության օբյեկտը, Սպանդարյան թիվ 4/40 ոչ բնակելի տարածքը և Ուսանողական թիվ 1 ոչ բնակելի տարածքը անհատույց օգտագործման իրավունքով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղին հատկացնելու մասին
6. «Հայաստանի ազգային արխիվ» ոչ առևտրային կազմակերպության հետ սահմանված կարգով անհատույց օգտագործման պայմանագիր կնքելու մասին
7. Համայնքի սեփականությունը հանդիսացող Բլբուլյան փողոցի թիվ 91 շենքի թիվ 11 բնակարանը անհատույց օտարելու մասին
8. Համայնքի սեփականությունը հանդիսացող Անկախության փողոցի թիվ 8 շենքի թիվ 24 բնակարանը անհատույց օտարելու մասին
9. Հողամասերի նպատակային նշանակության փոփոխություններ կատարելու մասին
10. Իջևան քաղաքային համայնքի «Կամուրջ» ՓԲԸ լուծարելու մասին
11. «Իջևանի բնակարանային տնտեսություն» ՓԲԸ-ի լուծարման մասին
12. Քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին
13. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ավագանու անդամներին ընդգրկելու մասին
14. Իջևանի քաղաքապետարանի «Իջևանի կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի հաշվեկշռում գտնվող հասարակական զուգարանի քանդման մասին
15. Քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնակամ շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ**

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 6

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ո ր ո շ ու մ է՝

Հաստատել համայնքի ավագանու օրակարգը

2. Հաղորդում 2011թ. բյուջեի 1-ին կիսամյակի կատարման մասին
3. Բարերար Անդրանիկ Ղազարյանին Իջևան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին
4. «Իջևանի դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի գործունեության համար մշակույթի տունը տրամադրելու մասին
5. Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող Ուսանողական փողոցի թիվ 3 հասարակական նշանակության օբյեկտը, Սպանդարյան թիվ 4/40 ոչ բնակելի տարածքը և Ուսանողական թիվ 1 ոչ բնակելի տարածքը անհատույց օգտագործման իրավունքով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղին հատկացնելու մասին
6. «Հայաստանի ազգային արխիվ» ոչ առևտրային կազմակերպության հետ սահմանված կարգով անհատույց օգտագործման պայմանագիր կնքելու մասին
7. Համայնքի սեփականությունը հանդիսացող Բլբուլյան փողոցի թիվ 91 շենքի թիվ 11 բնակարանը անհատույց օտարելու մասին
8. Համայնքի սեփականությունը հանդիսացող Անկախության փողոցի թիվ 8 շենքի թիվ 24 բնակարանը անհատույց օտարելու մասին
9. Հողամասերի նպատակային նշանակության փոփոխություններ կատարելու մասին
10. Իջևան քաղաքային համայնքի «Կամուրջ» ՓԲԸ լուծարելու մասին
11. «Իջևանի բնակարանային տնտեսություն» ՓԲԸ-ի լուծարման մասին
12. Քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին
13. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ավագանու անդամներին ընդգրկելու մասին
14. Իջևանի քաղաքապետարանի «Իջևանի կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի հաշվեկշռում գտնվող հասարակական զուգարանի քանդման մասին
15. Քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնակամ շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՄԼԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ կողմ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա

ՎԱՀԵ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ՎԱՐԴԱՆ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ԱՋԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ կողմ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

2. ՀԱՂՈՐԴՈՒՄ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի բյուջեի եկամտային մասի կատարողականը 2011թ հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 48,4%, կամ նախատեսված տարեկան 304813.1 հազ. դրամի դիմաց փաստացին կազմել է 147548.9 հազ. դրամ:

Սեփական եկամուտները կատարվել են 41.8% /նախատեսված 59559,0 հազ. դրամի դիմաց 24921,8 հազ. դրամ/, այդ թվում. հարկային եկամուտները կատարվել են 39,3%, որից հողի հարկը՝ 39,6% /2100.0 հազար դրամի դիմաց 832,1 հազ. դրամ/, գույքահարկը՝ 39,3% /24500,0 հազ. դրամի դիմաց 9627,3 հազ. դրամ/, ընդամենը տուրքերը կատարվել է 51,9%, այդ թվում պետական տուրքերը՝ 55,1%, տեղական տուրքերը՝ 49,7%:

Վարձակալական վճարների տարեկան առաջադրանքը կատարվել է 36,7%, այլ տեղական վճարներինը՝ 38,8%:

Այդ նույն ժամանակաշրջանում ընդամենը ծախսումները կատարվել են 34,1%, կամ տարեկան նախատեսված 402816,4 հազարի դիմաց փաստացի ծախսը կազմել է 139012,5 հազ. դրամ, որից ընդհանուր բնույթի հանրային ծառայության ծախսերը կատարվել են 47,1% /նախատեսված 85881,1 հազարի դիմաց 40477,7 հազ դրամ/, կրթության բնագավառի ծախսերը կատարվել են 45,4% /նախատեսված 106497 հազ դրամի դիմաց 48379,4 հազ. դրամ/, մշակույթի բնագավառինը՝ 51,6% /նախատեսված 19083 հազ. դիմաց 9863,4 հազ. դրամ/, աղբահանության և սան մաքրման բնագավառինը՝ 45,5% /նախատեսված 74284,0 հազարի դիմաց 33770,5 հազ. դրամ/:

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7

### 3. ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ քաղաքապետ Վ.Ներսիսյանը առաջարկություն է ներկայացրել, Իջևան քաղաքի «Սուրբ Ամենափրկիչ» եկեղեցու շինարարության հովանավոր, բարերար, ծնունդով իջևանցի Անդրանիկ Ղազարյանին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:

Հաշվի առնելով վերոհիշյալը, համայնքի ավագանին.

ո ր ո շ ու մ է.

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը և բարերար Անդրանիկ Ղազարյանին շնորհել Իջևան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ կողմ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ կողմ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ կողմ

ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8

4. «ԻՋԵՎԱՆԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ ՀՀ կառավարության 2010թ. սեպտեմբերի նիստի թիվ 38 արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի մշակութային հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների» ծրագրում ամրագրված է Տավուշի մարզում թատրոն ստեղծելու գաղափարը: «Իջևանի դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի հետագա շրջանառության գործընթացը շարունակելու համար անհրաժեշտ է ներկայացնել քաղաքի ավագանու որոշում թատրոնին աշխատանքային տարածք տրամադրելու մասին:

Հաշվի առնելով վերոհիշյալը, համայնքի ավագանին.

որոշում է՝

1. Տալ համաձայնություն քաղաքապետի առաջարկությանը՝«Իջևանի դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության համար թույլատրել օգտագործելու Իջևանի մշակույթի տունը՝ 320 տեղանոց դահլիճով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ կողմ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ԱՋԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ կողմ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ կողմ

ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9

5. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ, ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ԹԻՎ 4/40 ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԹԻՎ 1 ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը հիմնադրման օրվանից օգտագործում է համայնքային սեփականություն հանդիսացող Ուսանողական փողոցի թիվ 1 հասցեում գտնվող 3994.2քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը, Ուսանողական փողոցի թիվ 3 հասցեում գտնվող 2796.9քմ շենքային մակերես ունեցող հասարակական նշանակության օբյեկտը և Սպանդարյան փողոցի թիվ 4/40 հասցեում գտնվող 923.1քմ շենքային մակերեսով ոչ բնակելի տարածքը:

Հաշվի առնելով համալսարանի կարևորությունը Իջևան քաղաքի և տարածաշրջանի համար, համայնքի ավագանին.

որոշում է

1. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղին անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով հատկացնել համայնքի սեփականություն հանդիսացող Ուսանողական փողոցի թիվ 1 հասցեում գտնվող 3994.2քմ մակերես և 167729136 դրամ հաշվեկշռային արժեք ունեցող ոչ բնակելի տարածքը:
2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղին անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով հատկացնել համայնքի սեփականություն հանդիսացող Ուսանողական փողոցի թիվ 3 հասցեում գտնվող 5610քմ հողամաս, 2796.9քմ շենքային մակերես և 98951962դրամ հաշվեկշռային արժեք ունեցող հասարակական նշանակության օբյեկտը:
3. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղին անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով հատկացնել համայնքի սեփականություն հանդիսացող Սպանդարյան փողոցի թիվ 4/40 հասցեում գտնվող 923.1քմ շենքային մակերես և 523378976 դրամ հաշվեկշռային արժեք ունեցող ոչ բնակելի տարածքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա
ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա
ՎԱՀԵ ՂՈՒԼՈՒՄՅԱՆ -բացակա
ՎԱՐԴԱՆ ՂՈՒԼՈՒՄՅԱՆ -բացակա
ԱՋԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10

6. „ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ " ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ հաշվի առնելով ՀՀ Կառավարության 20.09.2007թ. N 1090-Ա «ՀՀ կառավարության 2002թ. օգոստոսի 22-ի N 1406-Ն որոշման մեջ լրացում կատարելու և «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության գույք ամրացնելու առաջարկության մասին» որոշման 2-րդ կետը անհրաժեշտություն է առաջացել կնքել մարզային արխիվի հետ տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:

Ելնելով վերոհիշյալից համայնքի ավագանին.

որոշում է

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ սահմանված կարգով կնքել Իջևանի Ղարագյոզյան 47 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի 301.3քմ ընդհանուր մակերեսով տարածքի համար 10 տարի ժամկետով անհատույց օգտագործման պայմանագիր:
2. Դրանից բխող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացնել «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ կողմ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ կողմ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՍԱՄՎԵԼ ՉԻՐՈՒԽՉՅԱՆ

ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11

7. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԼԲՈՒԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 91 ՇԵՆՔԻ ԹԻՎ 11 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 91 շենքի, թիվ 11 բնակարանը հանդիսանում է համայնքի սեփականությունը:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետը և հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ բնակարանում փաստացի բնակվում են և կարգապահ վարձակալներ են հանդիսանում Անահիտ Թադևոսյանը և Աշոտ Բեգինյանը, համայնքի ավագանին.

որոշում է՝

1.Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Բլբուլյան փողոցի թիվ 91 շենքի, թիվ 11 բնակարանը անհատույց օտարել նույն բնակարանում փաստացի բնակվող Անահիտ Թադևոսյանին և Աշոտ Բեգինյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա

ՎԱՀԵ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ՎԱՐԴԱՆ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ԱՋԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՋԻԲՈՒԽՉՅԱՆ

ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 12

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 8 ՇԵՆՔԻ ԹԻՎ 24 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևան քաղաքի Անկախության փողոցի թիվ 8 շենքի, թիվ 24 բնակարանը հանդիսանում է համայնքի սեփականությունը:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 20-րդ կետը և հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ բնակարանում փաստացի բնակվում են և կարգապահ վարձակալներ են հանդիսանում Նարինե և Արթուր Բեկնազարյանները, որոնք ժամանակին չեն կարողացել սեփականաշնորհել բնակարանը, համայնքի ավագանին.

ո ր ո շ ու մ է՝

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Իջևան քաղաքի Անկախության փողոցի թիվ 8 շենքի, թիվ 24 բնակարանը անհատույց օտարել նույն բնակարանում փաստացի բնակվող Նարինե և Արթուր Բեկնազարյաններին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ կողմ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա

ՎԱՀԵ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ՎԱՐԴԱՆ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ԱՋԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ կողմ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ կողմ

ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 13

9. ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ քաղաքապետարան առաջարկություններ են ներկայացվել Իջևան քաղաքի վարչական սահմաններում անտառային նպատակային նշանակության հողերից 6870քմ և 6794քմ մակերեսներով երկու հողամասեր հատուկ պահպանվող հողամասերի շարքը դասելու մասին: Քաղաքի վարչական սահմաններում գտնվող այդ հողամասերը բնակավայրի սահմանից հեռու են 280մ չափով, հանդիսանում են անտառային հողեր: Անհրաժեշտություն է առաջացել այդ հողամասերը հանել անտառային նպատակային նշանակության հողամասերի շարքից և դասել հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հողերի շարքը:

Առաջարկություն է ներկայացվել նաև համայնքային սեփականություն հանդիսացող ,,Սպիտակ լիճ" արհեստական ջրամբարի ջրապաշարների օգտագործմամբ փոքր հզորության հիդրոէլեկտրակայան հիմնելու նպատակահարմարության մասին, որի տեխնիկա-տնտեսական հիմնավորումները մշակվել են ,,Գիդէպինվեստ" ընկերության կողմից: Անհրաժեշտություն է առաջացել ջրընդունիչ, խողովակաշար և կայան կառուցելու համար 0.8հա անտառային նպատակային նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխել և դասել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասերի շարքը:

Առաջարկություն է ներկայացվել նաև Իջևանի վարչական սահմաններում անտառային նպատակային նշանակության հողերից 280քմ, 2000քմ, 3400քմ, 3600քմ չորս հողամասեր էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասերի շարքը դասելու մասին: Այդ հողամասերում գտնվում են ջրամատակարարման համակարգի ,,Գմբեթ" ՕԿՋ -280քմ, ,,Քարքարուտ" ՕԿՋ-2000քմ, ,,Անապատ" ՕԿՋ-3400քմ, ,,Գետահովիտ" ՕԿՋ-3600քմ: Համայնքային սեփականություն հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի գույքի կադաստրային գրանցման համար անհրաժեշտություն է առաջացել նշված օրական կարգավորման ջրամբարների սպասարկման և շահագործման համար անհրաժեշտ հողամասերը հանել անտառային նպատակային նշանակության հողամասերի շարքից և դասել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասերի շարքը:

Առաջարկություն է ներկայացվել նաև Իջևան քաղաքի վարչական սահմաններում անտառային նպատակային նշանակության հողերից 0.9հա հողամաս հատուկ պահպանվող հողերի շարքը դասելու վերաբերյալ: Նշված հողամասում առաջարկություն է ներկայացվել կառուցել հանգստի և ժամանցի գոտի:

Հաշվի առնելով վերոհիշյալը համայնքի ավագանին.

ո ր ո շ ու մ է՝

1. Տալ համաձայնություն Իջևան համայնքի վարչական սահմաններում 6870քմ հողամաս անտառային նպատակային նշանակության հողամասերի շարքից հանելու և հատուկ պահպանվող հողամասերի շարքում ընդգրկելու առաջարկությանը:

2. Տալ համաձայնություն Իջևան համայնքի վարչական սահմաններում 6794քմ հողամաս անտառային նպատակային նշանակության հողամասերի շարքից հանելու և հատուկ պահպանվող հողամասերի շարքում ընդգրկելու առաջարկությանը:

3. Տալ համաձայնություն Իջևան համայնքի վարչական սահմաններում 0.8հա հողամաս անտառային նպատակային նշանակության հողամասերի շարքից հանելու և էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասերի շարքում ընդգրկելու առաջարկությանը:

4. Տալ համաձայնություն Իջևան համայնքի վարչական սահմաններում ,,Գմբեթ" ՕԿՋ-ի 280քմ հողամասը անտառային նպատակային նշանակության հողամասերի շարքից հանելու և էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասերի շարքում ընդգրկելու առաջարկությանը:

5. Տալ համաձայնություն Իջևան համայնքի վարչական սահմաններում ,,Քարքարուտ" ՕԿՋ-ի 2000քմ հողամասը անտառային նպատակային նշանակության հողամասերի շարքից հանելու և էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասերի շարքում ընդգրկելու առաջարկությանը:

6. Տալ համաձայնություն Իջևան համայնքի վարչական սահմաններում ,,Անապատ" ՕԿՋ-ի 3400քմ հողամասը անտառային նպատակային նշանակության հողամասերի շարքից հանելու և էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասերի շարքում ընդգրկելու առաջարկությանը:

7. Տալ համաձայնություն Իջևան համայնքի վարչական սահմաններում ,,Գետահովիտ" ՕԿԶ-ի 3600քմ հողամասը անտառային նպատակային նշանակության հողամասերի շարքից հանելու և էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասերի շարքում ընդգրկելու առաջարկությանը:

8. Տալ համաձայնություն Իջևան քաղաքի վարչական սահմաններում 0.9հա հողամաս անտառային նպատակային նշանակության հողամասերի շարքից հանելու և հատուկ պահպանվող հողամասերի շարքում ընդգրկելու առաջարկությանը:

9. Դիմել Տավուշի մարզպետին, օրենքով սահմանված կարգով վերոհիշյալ հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու առաջարկությունները ՀՀ կառավարություն ներկայացնելու համար:

10. Տալ համաձայնություն Իջևան քաղաքի վարչական սահմաններում 6870քմ, 6794քմ և 0,8հա մակերեսներով հողամասերը մրցույթի և աճուրդի ներկայացնելու առաջարկությանը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ կողմ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ կողմ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ կողմ

ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14

10. ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ,,ԿԱՄՈՒՐՋ" ՓԲԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևանի քաղաքային համայնքի «Կամուրջ» ՓԲԸ 2009 ֆինանսատնտեսական տարում համայնքի բյուջեով նախատեսված 2.0 մլն եկամուտների առաջադրանքը կատարել է 480 հազար դրամ, կամ նախատեսվածի՝ 24%:

Ընկերության աշխատանքները անբավարար կազմակերպվելու և վերահսկվելու հետևանքով կանգառների սպասարկման վարձավճարների գանձումը վերջին տարիներին ձախողվել է և համայնքային բյուջեով նախատեսված եկամուտների մասով տարեկան առաջադրանքները չեն կատարվել: Այդ պատճառով «Կամուրջ» ՓԲԸ գործունեությունը դադարեցվել է սկսած 2010թ օգոստոսից:

Հաշվի առնելով վերոհիշյալը, համայնքի ավագանին.

ո ր ո շ ու մ է՝

1. Լուծարել Իջևանի քաղաքային համայնքի «Կամուրջ» Փակ բաժնետիրական ընկերությունը:
2. Ստեղծել լուծարման հանձնաժողով և օրենքով սահմանված կարգով իրականացնել ,,Կամուրջ" ՓԲԸ-ի լուծարման գործընթացը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա
ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա
ՎԱՀԵ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա
ՎԱՐԴԱՆ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա
ԱՁԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՀՐԱՅՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15

## 11. „ԻՋԵՎԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ„ ՓԲԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ Իջևանի քաղաքային համայնքի «Իջևան բնակարանային տնտեսություն» ՓԲԸ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը չի համապատասխանում քաղաքի բազմաբնակարան շենքերի սպասարկման հիմնախնդիրների լիարժեք իրականացման պահանջներին: Շենքերի սպասարկման համար նախատեսված վարձավճարների միայն 20 տոկոսն է հավաքվում բնակչությունից: Արդյունքում՝ ընկերության ֆինանսական անբավարար վիճակը իր բացասական ազդեցությունն է թողնում նաև կատարվող աշխատանքների որակի ու ծավալի վրա:

Հաշվի առնելով, որ «Իջևան բնակարանային տնտեսություն» ՓԲԸ –ն 2009թ. ապրիլից դադարեցրել է իր գործունեությունը, համայնքի ավագանին.

ո ր ո շ ու մ է

1. Լուծարել Իջևանի քաղաքային համայնքի «Իջևանի բնակարանային տնտեսություն» Փակ բաժնետիրական ընկերությունը:
2. Ստեղծել լուծարման հանձնաժողով և օրենքով սահմանված կարգով իրականացնել «Իջևանի բնակարանային տնտեսություն» ՓԲԸ-ի լուծարման գործընթացը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ կողմ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա
ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա
ՎԱՀԵ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա
ՎԱՐԴԱՆ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա
ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ կողմ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ
ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ
ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ կողմ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ
ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ կողմ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 16

12. ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ համաձայն ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 24-ի 164-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 3-րդ կետի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է համայնքի ավագանին:

Հաշվի առնելով վերոհիշյալը, համայնքի ավագանին.

ո ր ո շ ու մ է՝

Հաստատել քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետևյալ կազմը.

1. Թանանյան Բորիս- հանձնաժողովի նախագահ, աշխատակազմի քարտուղար
2. Ամիրյան Համիկ- հանձնաժողովի քարտուղար, Իջևանի ազգային վարժարանի տնօրեն
3. Սուքոյան Լուսինե- հանձնաժողովի անդամ, աշխատակազմի գլխավոր մասնագետ
4. Քամալյան Սերյոժա- հանձնաժողովի անդամ, աշխատակազմի առաջատար մասնագետ
5. Գրիգորյան Մարինե- հանձնաժողովի անդամ, աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ կողմ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա

ՀՈՎԻԿ ԽԵՑՅԱՆ -բացակա

ՎԱՀԵ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ՎԱՐԴԱՆ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ կողմ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17

## 13. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ ՀՀ համայնքային ծառայության օրենքում կատարված փոփոխությունների համաձայն /30.09.2008թ ՀՕ-172-Ն/ համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվում են համայնքի ավագանու մինչև 5 անդամներ:

Հաշվի առնելով վերոհիշյալը և այն հանգամանքը, որ ս/թ. մայիսի 29-ին ընտրվել է համայնքի նոր ավագանի, համայնքի ավագանին.

ո ր ո շ ու մ է՝

1. Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի քանակական կազմը որոշել թվով 5 ավագանու անդամներ և հաստատել հետևյալ անվանակազմը՝ Նարինե Գրիգորյան, Հրաչյա Ներսիսյան, Սամվել Չիբուխչյան, Էմիլ Վարդապետյան, Գարիկ Սուքոյան:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 18

### 14. ԻՋԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԻՋԵՎԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶՈՒԳԱՐԱՆԻ ՔԱՆԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ քաղաքապետարան է դիմել «Իջևանի կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի տնօրինությունը, հիմնարկի հաշվեկշռում գտնվող 177հազ.դրամ արժեքով, Երևանյան փողոցում գտնվող հասարակական զուգարանը քանդելու առաջարկով: Հասարակական զուգարանը գտնվում է Երևանյան փողոցում, հակասանիտարական վիճակում և նրա հետագա շահագործումը աննպատակահարմար է:

Հաշվի առնելով վերոհիշյալը, համայնքի ավագանին.

ո ր ո շ ու մ է՝

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը «Իջևանի կոմունալ ծառայություն» բյուջետային հիմնարկի հաշվեկշռում գտնվող, 177հազ.դրամ հաշվեկշռային արժեքով հասարակական զուգարանը քանդելու վերաբերյալ:
2. Հանձնարարել ֆինանսական բաժնին /պետ Վ.Գևորգյան/ կատարելու համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա
ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ կողմ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ -բացակա
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա
ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա
ՎԱՀԵ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա
ՎԱՐԴԱՆ ԴԱԼՈՒՄՅԱՆ -բացակա
ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ կողմ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ
ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ
ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ
ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ կողմ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ
ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ կողմ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 25-Ի ՆԻՍՏԻ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19

### 15. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություններ են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամասեր հատկացնելու մասին:

Հաշվի առնելով վերոհիշյալը, համայնքի ավագանին.

որոշում է՝

1. Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը՝ համաձայն աղյուսակի.

| ՀՀ | Նպատակը | Հասցե | Մակերես՝քմ |
|---|---|---|---|
| 1. | Բնակելի կառ. ավտոտնակ /ինքնակամ/ | Աբովյան | 24.9/22.1 |
| 2. | Բնակելի կառ. ավտոտնակ | Բլբուլյան | 19.8 |
| 3. | Բնակելի կառ. ավտոտնակ | Բլբուլյան | 19.8 |
| 4. | Բնակելի կառ. ավտոտնակ | Մետաղագործների | 2x24 |
| 5. | Հաս կառ /ինքնակամ/ | Աբովյան | 34.9/20.4 |
| 6. | Բնակելի կառ. ավտոտնակ | Արցախյան 1-ին նրբ | 24 |
| 7. | Բնակ /ավտոտնակ/ | Անկախության փ16 | 18.2 |
| 8. | Հաս. կառ. /ընդ./ | Ուսանողական փ | 78 |
| 9. | Հաս. կառ. | Մետաղագործների խճ. | 90 |
| 10. | Բնակելի կառուցապատում /ընդ/ | Մետաղագործների խճ. | 200 |
| 11. | Բնակելի կառ. ավտոտնակ | Նալբանդյան փ | 18 |
| 12. | Հաս. կառ. | Աբովյան փ | 19.8 |
| 13. | Գյուղատնտեսական | Մետաղագործների | 1440 |
| 14. | Բնակելի կառ. ավտոտնակ | Բլբուլյան փ | 19.8 |
| 15. | Հաս. կառ. | Աբովյան | 24 |
| 16. | Հաս. կառ. | Նալբանդյան փ | 3x120 |
| 17. | Հաս. կառ. | Մետաղագործների | 30 |
| 18. | Բնակելի կառ /ավտոտնակ/ | Երիտասարդական փ | 19.8 |
| 19. | Հաս.կառ /ինքնակամ/ | Երիտասարդական փ | 21.79 |
| 20. | Բնակելի կառ. | Արցախյան փ | 18 |
| 21. | Բնակելի կառ /ավտոտնակ/ | Անկախության փ | 23.4/13.26 |
| 22. | Բնակելի կառ/ինքնակամ/ | Պռոշյան փ 9 | 155 |
| 23. | Բնակելի կառ/ինքնակամ/ | Անկախության փ | 16.44 |
| 24. | Բնակելի կառ/ինքնակամ/ | Անկախության փ | 38.7 |
| 25. | Բնակելի կառ/ինքնակամ/ | Տերյան 13 | 30.1 |
| 26. | Բնակելի կառ/ավտոտնակ/ | Աբովյան փ | 67 |
| 27. | Հաս.կառ /ինքնակամ/ | Երևանյան փ | 3.28 |
| 28. | Բնակելի կառ /ինքնակամ/ | Մետաղագործների | 747.6 |
| 29. | Բնակելի կառ | Բլբուլյան փ | 822 |
| 30. | Բնակելի կառ | Նալբանդյան փ | 450 |
| 31. | Բնակելի կառ | Այգեստան | 1620.8 |
| 32. | Արտադրական | Արցախյան | 7971.3 |
| 33. | Հաս.կառ | Երևանյան փ | 24 |
| 34. | Բնակելի կառ | Աղայան | 100 |
| 35. | Բնակելի կառ/ավտոտնակ/ | Մետաղագործների | 30 |

| | | | |
|---|---|---|---|
| 36. | Բնակելի կառ/ինքնակամ/ | Սպանդարյան փ | 50.2 |
| 37. | Հաս.կառ | Բլբուլյան փ | 52.9 |
| 38. | Բնակելի կառ. ավտոտնակ /ինքնակամ/ | Մետաղագործների խճ. | 63.09/56.77 |
| 39. | Բնակելի կառ. ավտոտնակ /ինքնակամ/ | Բլբուլյան փ | 25.26 |
| 40. | Հաս.կառ | Մետաղագործների խճ. | 30 |
| 41. | Հաս.կառ. | Արցախյան փ. | 24 |
| 42. | Հաս.կառ /ինքնակամ/ | Աբովյան | 20,8 |
| 43. | Եկեղեցի հաս.կառ /ինքնակամ/ | Իջևանյան | 600 |
| 44. | Հաս.կառ. | Նալբանդյան փ | 40 |
| 45. | Բնակելի կառ/ընդ/ | Անկախության փ | 15 |
| 46. | Քարարտ/ընդ/ | Արցախյան փ. | 7000 |
| 47. | Բնակելի կառ | Անկախության փ | 30 |
| 48. | Հաս.կառ /ինքնակամ/ | Երևանյան | 23.3/75.2 |
| 49. | Հաս.կառ | Անկախության փ | 18 |
| 50. | Բնակելի կառ | Սպանդարյան փ | 272 |
| 51. | Հաս.կառ | Անկախության փ | 12 |
| 52. | Հաս.կառ/ընդ/ | Բլբուլյան փ | 48 |
| 53. | Բնակելի կառ | Անկախության փ | 19.8 |
| 54. | Բնակ. կառ./ինքնակամ/ | Սպանդարյան փ | 53.1/110.55 |
| 55. | Հաս.կառ / ընդ / | Աբովյան | 9.5 |
| 56. | Բնակելի կառ /ինքնակամ/ | Անկախության փ | 35.8 |
| 57. | Բնակելի կառ /ավտոտնակ ինքնակամ/ | Աբովյան փ. | 24.76/21.3 |
| 58. | Բնակելի կառ /ավտոտնակ ինքնակամ/ | Անկախության փ | 35.96 |
| 59. | Բնակելի կառ /ավտոտնակ ինքնակամ/ | Բլբուլյան փ | 28 |
| 60. | Հաս.կառ /ինքնակամ/ | Արցախյան փ. | 26.27 |
| 61. | Հաս.կառ /ինքնակամ/ | Արցախյան փ. | 53.42 |
| 62. | Հաս.կառ | Ուսանողական | 24 |

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՀԱՄՄԻԿ ԱՄԻՐՅԱՆ -բացակա

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ կողմ

ԳՐԻԳՈՐ ՂԱՆԻԵԼՅԱՆ -բացակա

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ -բացակա

ՀՈՎԻԿ ԽԵՉՅԱՆ -բացակա

ՎԱՀԵ ՂԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ -բացակա

ԱԶԱՏ ՆԱԶԱՐՅԱՆ կողմ

ԿԱՐԵՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՀՐԱՉՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ կողմ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ԳԱՐԻԿ ՍՈՒՔՈՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ՆԱՐԵԿ ՕՀԱՆՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ -բացակա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՈՒԺԱՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ